

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՐ, ՊՐՈՅԵԿՏՈՐ
/ ՌՈՒԲԵՆ ԿԱՌԵՆ ԵՄԲՐԱՆԻՅԱՆ

18 հունիսի, 2021

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐՕՏԵՐ

Թամարա Բորիկի Անդրեասյանի «Լեւոն Բաշայանը արեւմտահայ 80-ականների գրական շարժման համապատկերում» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզոնու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 18.06.2021 թ. թիվ 12 նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, Բ.Գ.Պ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, պրոֆ. Ալբերտ Մակարյանը, Բ.Գ.Թ., դոցենտներ Նաիրա Խաչատրյանը, Քնարիկ Արրահամյանը, Լուսինե Գալստյանը, Արմենուհի Մուրադյանը:

ԼՄԵՑԻՆ՝ Թամարա Անդրեասյանի «Լեւոն Բաշայանը արեւմտահայ 80-ականների գրական շարժման համապատկերում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ Ժ.01.01 «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, Բ.Գ.Պ., պրոֆ. Ս. Դանիելյանը, դոցենտներ Ք. Արրահամյանը, Ա. Մուրադյանը, Լ. Գալստյանը:

Թամարա Բորիկի Անդրեասյանի «Լեւոն Բաշայանը արեւմտահայ 80-ականների գրական շարժման համապատկերում» թեկնածուական ատենախոսությունը ուշագրավ է արեւմտահայ գրականության կարեւոր շրջաններից մեկին, ինչպես նաեւ սակավ ուսումնասիրված հեղինակի դիմելու տեսանկյունից: Գնահատելին այն է, որ

Լեւոն Բաշայանի ստեղծագործական աշխարհը տրված է ոչ թե մեկուսի, այլ գրական զարգացումների համապատկերի վրա, որն իր հերթին հնարավորություն է տվել քննել տիպաբանական հասկանիշներ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնք իրենց հերթին ունեն ենթագլուխներ, եզրակացություններից եւ օգտագործած գրականության ցանկից:

Ներածական բաժնում հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու գիտական մեկնության անհրաժեշտությունը, փորձ է արվում պատճառաբանել կառուցվածքային տրոհումները:

Առաջին՝ «Լեւոն Բաշայանը՝ արեւմտահայ 80-ականների գրական շարժման շառավիղներում» գլխում, հիմնականում գրապատմական հաջորդականությամբ բերվում են հեղինակի՝ մամուլում խմբագրական աշխատանքի տարեգրությունն ու աշխատակցությունների գրական-հրապարակագրական շերտերը, որոնք ներկայացված են «Լեւոն Բաշայանի գործունեությունը Կ. Պոլսում («Արեւելք», «Մասիս», «Հայրենիք»)» եւ «Լեւոն Բաշայանի գործունեությունը Լոնդոնում եւ Փարիզում. «Նոր կյանք», «Լը Ֆուայե» («Օջախ») պարբերականների հրատարակությունը» ենթագլուխներում:

Երկրորդ գլխում արդեն «Սոցիալ-հոգեբանական շեշտադրումները 80-ականների ստեղծագործություններում» խորագրի տակ ստենախոսը հիմնականում ծանրանում է հեղինակի գեղարվեստական եւ հրապարակագրական ժառանգության պարզաբանման վրա: Թեմատիկ բաժանումների սկզբունքով առանձնացված են հետեւյալ ենթագլուխները՝ «Սոցիալական խնդիրներով պայմանավորված՝ մարդկային ճակատագրերի խեղաթյուրման արտացոլումները», «Դրամի ապականած աշխարհում», «Պանդիստությունը՝ սոցիալական ու ազգային ողբերգություն», «Կերպարների հոգեբանական զարգացումները»: Շարադրանքը տրվում է Լ. Բաշայանի եւ արեւմտահայ իրապաշտական շարժման ներկայացուցիչների նույնատիպ ստեղծագործությունների համադրման ճանապարհով: Ուշագրավ զուգահեռներ են պարզում Զոհրապի, Զոպանյանի, Սիպիլի, Արփիարյանի հետ առնչությունները:

Եզրակացությունները հիմնականում բխում են աշխատանքի բովանդակությունից

և ցույց են տալիս դրա ներքին տրամաբանությունը:

Գնահատելի ենք համարում բանասիրական առանձին ճշգտումները, ինչպես օրինակ «Ածուխի կտորները» պատկերի պարագային (էջ 101):

Մեր նկատառումները վերաբերում են նախ, ատենախոսության խորագրի մեջ միայն «80-ականներ» նշումին. պիտի լիներ ժամանակի որոշակիությունը հետապնդող 19-րդ դարի 80-ական թթ. կամ 1880-ական թթ.: Չարմանալի է, որ 80-ականների անվան տակ քննվում են հիմնականում 1890-ականներին լույս տեսած ստեղծագործություններ: Ուրեմն՝ ինչո՞ւ միայն 80-ականներ:

Առաջին գլխի խորագիրը գրեթե նույնությամբ կրկնում է ատենախոսության վերնագիրը, իսկ արդեն բովանդակային առումով նույն գլխի երկրորդ ենթագլուխը, որտեղ գնահատելի համարելով «Լը Ֆուայե» պարբերականը շրջանառության մեջ դնելու ջանքը՝ կարծում ենք, մի տեսակ անախրոնիզմ է դրսևորում մեկնության ենթակա շրջանի հետ: Արդարացում թերևս կարող էր լինել հեղինակային այն դատումը, թե Բաշայանը 1920-30-ական թթ. «շարունակում էր գրականության գեղագիտական դրույթներին մոտենալ արեւմտահայ ութսունականների դիրքորոշումներից» (էջ 75):

Նյութի ընդգրկման տեսանկյունից առավել հաջողված է թվում երկրորդ գլուխը, ուր, սակայն, փոքր-ինչ անհամամասն են ենթագլուխների բաժանումները, որոնք բոլորն էլ, այդ թվում և պանդխտության թեման շոշափող գործերը, մեծ հաշվով, սոցիալական խնդրի դրսևորումներ և հետեւանք են և կարող էին տեղավորվել մեկ ընդհանրական ենթագլխի տակ:

Ատենախոսության մեջ տեղ են գտել առանձին անհաջող ձեւակերպումներ, ինչպես «Արփիար Արփիարյանի գաղափարական այս սկզբունքները կիսում էին նաեւ արեւմտահայ մյուս ութսունականները» (էջ 8-9, նունը՝ սեղմագրում), եզրակացությունների՝ ոչ գիտական պատճառաբանումները, թե իբր «ատենախոսությունը ավարտվում է ուսումնասիրության տեսական և գործնական նշանակության շուրջ կատարված եզրակացություններով» (էջ 12), «քրոնիկ և ակնարկ ժանրերը» արտահայտությունը (էջ 34): Նման ոչ հստակ ձեւակերպումների արդյունքում գրապատմական սխալի տպավորություն է թողնում 75-րդ էջում Գեղամ Բարսեղյանի գրականությանն անդրադարձը: Ստացվում է, որ նահատակ Գ.

Բարսեղյանը դիտվում է հենց «այդ չորս տասնամյակի» հեռավորության լուսարձակի տակ:

Կան սխալ բառագործածության դեպքեր՝ «հանդիպվող» (էջ 5, 22, 32, 34, 47, 50, 101, 121, 127, 130, 132, նույնը՝ սեղմագրում), «մինչկուսակցական հակասություններ» (էջ 60), «եվրոպական տիրություններ» (էջ 82), «գարգացվածություն» (էջ 115) եւ այլն: 80-84-րդ էջերում երևում է նկարագրական շարադրանքի հակվածություն: Ավելին՝ փաստական կարգի սխալ՝ ոչ թե Վահրամ, այլ՝ Վահան Մալեգյան (էջ 42): Արեւմտահայերեն բնագրերի մեջբերումներում նույնպես կան սպրդումներ (էջ 29, 56 եւ այլն), քերականական տարընթերցումներ, որոնք արեւելահայերենի հետ շփոթի արդյունք են (օրինակ՝ «...ինձի սիրեցնել տվիր», էջ 140):

Ատենախոսության առանձին հատվածներում տեղ են գտել մտքի կրկնություններ, ինչպես Հրանդի մասին նյութի (էջ 10 եւ 16) կամ «1885 տարին Թուրքիո հայ գրականության համար» հոդվածի առիթներով (էջ 7 եւ 27):

Ծանոթագրություններում շատ հաճախ առանց չափերտների են տրվում համահավաք գիրք-ժողովածուների անվանումները. պիտի լինեին «Հայ նոր գրականության պատմություն», «Արեւմտահայ գրողների նամականի», «Հայ ժողովրդական հերոսավեպ, Սասունցի Դավիթ» եւ այլն:

Գրականության ցանկում բացակայում է այբբենական կանոնավոր դասավորումը: Կրկնվում է Էդվարդ Ջրբաշյանի «Գրականագիտության ներածություն» գրքի (2011) մասին տեղեկությունը (9-րդ եւ 24-րդ կետեր, էջ 154-155):

Սեղմագրում ատենախոսն ինքն իր մասին գրում է. «...հեղինակն անդրադարձել է» (էջ 7):

1990-ին Հասմիկ Առաքելյանը պաշտպանել է թեկնածուական աշխատանք՝ «Լեւոն Բաշայան. կյանքը եւ գործը» թեմայով: Լավ կլիներ, որ ատենախոսը ծանոթ լիներ այդ նյութին եւ արժեւորեր աղբյուրը: Շարադրանքում ատենախոսը հաճախ է դիմել քննվող հեղինակների նամակագրությանը, ինչը գնահատելի ենք համարում: Այս տեսանկյունից հետաքրքրական կլիներ, եթե ներառեր Բեյրութի «Հայկազյան Հայագիտական Հանդես»-ի 2000 եւ 2017 թթ. համարներում տեղ գտած Տիգրան Գեւորգյանի «Հարյուրամյա հնությանը նամակը մը Լեւոն Բաշայանեն» եւ Հայկ Ավագյանի «Արշակ Չոպանյանի եւ Լեւոն Բաշայանի նամակները Արփիար

Արփիարյանին» ուսումնասիրությունները, որոնցում տեղ գտած նամակները դուրս են մնացել «Արեւմտահայ գրողների նամականի» հատորից (1972):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Թամարա Բորիկի Անդրեասյանի «Լեւոն Բաշալյանը արեւմտահայ 80-ականների գրական շարժման համապատկերում» թեմայով թեկնածուականատենախոսության վրա կատարված է ծավալուն համադրական աշխատանք, հեղինակը տիրապետում է նյութին: Շարադրանքը հիմնականում գրագետ է: Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին եւ Ժ.01.01 «Հայ դասական գրականություն» թվանիշին, ուստի երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:




ՍՈՒՐԵՆ ԴԱՎԹԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՅ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ



Հաստատում եմ պրոֆ. Ս. Գ. Գահարյանի պտորագրությունը:



ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏՉԻ ԻՍՊԻՐՅԱՆ

Խ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ